բակնամուտի գիշերը ոչ միայն այն մագիկ մտածողության թելադրությամբ, որ նոր տարին պիտի դիմավորվի ընդհանուր ուրախությամբ, որպեսզի առաջիկա ամբողջ տարին հաջողությամբ անցնի[93], այլև այն դիտավորությամբ, որ ննջեցյալն էլ մասնակից լինի ընդհանուր ուրախության, քանի որ դեռ վերջնականապես չի հեռացել ընտանիքից և համայնքից։ Տարին լրանալուց հետո ննջեցյալն անցնում էր «համայն նոր և հին ննջեցելոց» շարքը, ընդհանրապես՝ նախահայրերի շարքը։

Հետաքրքրական է, որ այնուհետև այդ ննջեցյալների գերեզմաններն օրհնվում էին համայնքի բոլոր անդամների կողմից միաժամանակ, ամեն մեծ տոնի հաջորդ օրը մրոբլոց էր՝ Ծննդի, Զատկի, Համբարձման, Վարդավառի և Աստվածածնի, նաև Սուրբ Խաչի տոների հաջորդ օրը, երբ ամեն մի ընտանիք այցելում էր իր հին և նոր ննջեցյալների գերեզմանները և հոգեհանգիստ կատարել տալիս։ Հոգին հանգստացնելու անհրաժեշտություն էր զգացվում կամ նրա համար, որ այդ տոներին ննջեցյալները փորձած պիտի լինեին այցելելու իրենց բարեկամներին ընդհանուր ուրախությանը մասնակցելու համար և ուստի իրենց գերեզմաններից հեռացած՝ հանգիստը խանգարած, կամ նրա համար, որ վշտացած էին լինում այդ ուրախությանը մասնակցած չլինելու համար։ Նրանց վշտացած սիրտը պետք էր մեղմացնել, հանգստացնել։

Այլ բնույթ ուներ այն հասարակական ընդհանուր հացկերույթը եկեղեցու բակում կամ գերեզմանատանը Մեծ պասի առաջին օրը, երբ բոլոր ընտանիքները տանից բերած կերակուրներով նստում էին մի սեղանի և կերակուրները միատեղ ճաշակում։ Թեև այս անգամ էլ հոգեհանգիստ էր կատարվում, բայց ոչ առանձին ընտանիքների, այլ ամբողջ համայնքի հին և նոր ննջեցյալների վրա, բարեկենդանական երկար զվարճություններից և առատ կերուխումից հետո, և այսպիսով, խրախուսվում էր բնության բարի կենդանանալը։ Սա ոչ թե հաջորդում էր մասնավոր պասերին, այլ տեղի էր ունենում Մեծ պասի սկզբնավորության օրը և հետապնդում էր ոչ թե հոգիների հանգստացնելը, այլ բարեկենդանական տոնախմբությունների և Մեծ պասի հետ միևնույն մագիկ նպատակն էր հետապնդում՝ ամբողջ բնությունը խրախուսել բարի հարության։

Այն, որ բազմաթիվ տեսակի միջոցներ էին ձեռք առնվում հոգիները հանգստացնելու համար, ապացույց է, որ հոգիներն ըստ ժողովրդական աշխարհայացքի ամբողջովին անջատված չեն այս աշխարհից և հեռացած մյուս աշխարհը։

Սովորաբար ննջեցյալներն այցելում էին ազգականներին արևը մայր մտնելուց հետո, առանձնապես կիրակնամուտին, որովհետև այդ պահին հարազատները նրանց դիմավորելու համար պատրաստություններ էին տեսնում՝ վառած էին պահում ճրագն ու խունկ ծխում, արգելում էին այդ օրը լվացք անել, լողանալ, գլուխ լվանալ, շատ ջուր խմել, չլինի՞ թե այցելող ննջեցյալների համար ջուրը պակասի։ Հոգիները կարող էին զետեղվել նաև ձիու, էշի, եզան, ոչխարի և այլ կենդանու մեջ։ Կային հավատացողներ, որ հոգիները թափանցում են և կանանց արգանդը և պատճառ են դառնում նրանց հղիության[94] և նոր մարմին առնելով, նորից ծնվում։ Այսպես էին բացատրում նոր ծնվածի մեջ պապերի ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների

---

[93] Բարի սկզբնավորության մագիա։

[94] Գորիս։